«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը

Հաստատություն ՝ *Երևանի թիվ 128 մանկապարտեզ*

Դաստիարակ ՝ Մարտիրոսյան Շուշանիկ

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

Երևան 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Գլուխ 1 4

1.1. ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՁԵԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ 4

1.2 ԻՆՉ Է ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ 6

Գլուխ 2 8

2.1. Հայրենաճանաչողության ուսուցման դաստիարակչական նշանակությունը 8

2.2 Մեր հայրենիքի խորհրդանիշները 9

Պետական զինանշան 9

Պետական օրհներգ 10

Պարապմունք 10

Դիտարկում 15

Եզրակացություն 20

Օգտագործված գրականության ցանկ 20

Ներածություն

Հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը նպաստում է երեխաների մեջ սերմանելու սեր դեպի հայրենիքը: Մանկությունը մարդկային կյանքի կարևոր ժամանակաշրջան է, և այն բանից, թե ինչ է ստացել նրա բանականությունն ու սիրտը շրջապատի աշխարհից, այդ ամենից է կախված՝ ինչպիսին մարդ կդառնա այսօրվա մանուկը: Մեր ազգի նկարագիրը պահելու և հայրենիքին տեր կանգնելու հիմքում ընկած է հայրենաճանաչողությունը: Անհատն այնքանով է տեր կանգնում իր հայրենիքին, որքանով ճանաչում է այն և այդ ճանաչողությունն է իր հետ բերում կապվածություն, սեր և նվիրում դեպի հայրենիք:

Հայրենիքն այն թանկարժեք տարածքն է, որի համար իրենց կյանքն են զոհել շատ հայորդիներ: Մենք պարտավոր ենք այն ամբողջությամբ սիրել, պահպանել և փոխանցել հաջորդ սերունդներին:

Շատ կարևոր է հայրենաճանաչողությանը նվիրված պարապմունքներ անցկացնել, որի արդյունքում ձևավորվում են հայրենասեր անհատներ:

Յուրաքանչյուր անձի, երեխայի մեջ պետք է սերմանել սեր հայրենիքի և ազգի նկատմամբ, իսկ ժամանակի ընթացքում այդ սերը պետք է մեծացնել և ամրացնել:

Հետազոտական աշխատանքի նպատակն է երեխաների մեջ զարգացնել ազգային արժեքներ, պատրաստել գիտակից և պատասխանատու անհատներ, որոնք կճանաչեն և կսիրեն իրենց հայրենիքը:

Հետազոտության խնդիրներն են.

- ուսումնասիրել մասնագիտական գրականություն քննարկվող հարցի վերաբերյալ
- հիմնավորել հայրենաճանաչողության ուսուցման դաստիարակչական նշանակությունը. Հայաստանի Հանրապետության խորհրդանիշների՝ դրոշի, զինանշանի և օրհներգի միջոցով ուսումնասիրել և ճանաչել հայրենիքը

Գլուխ 1

1.1. ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՁԵԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հայրենասիրության մասին պատկերացումները կապված են հայրենիքի նկատմամբ սիրո հետ, սակայն հայրենասիրության էության վերաբերյալ պատկերացումները տարբեր մարդկանց մոտ տարբեր են:

Հայրենասիրությունը հասարակական զգացողություն է, որի իմաստը սերն է հայրենիքի նկատմամբ և պատրաստակամությունը ստորադասել սեփական շահերը նրա համար: Հայրենասիրությունը ենթադրում է հպարտություն հայրենիքի նվաճումների հանդեպ: Հայրենասիրությունը կազմում է կեցության հիմքը և բնականոն գոյության և զարգացման երաշխիքը: Հայրենասիրությունը ենթադրում է ազգային շահերի պաշտպանում, կապվածություն սեփական հողին, սեր դեպի հայրենիքի մշակույթը և սեփական լեզուն:

Ով չի ճանաչում իր հայրենիքը, չի կարող ճշմարիտ սիրել նրան

Ռաֆֆի

Մեր ժողովուրդը առանց հայրենասիրության այն է, ինչ որ մարմին՝ առանց հոգու

Գարեգին Նժդեհ

Չկա ավելի խոր զգացում, քան հայրենասիրությունը

Պարույր Սևակ

Կա մի ուրիշ մարմին, որ ավելի ու ավելի պաշտելի է, քան մեր սեփականը: Այդ մարմինը հայրենիքն է:

Մուրացան

Հայրենասիրությունը չի նշանակում սիրել միայն իր հայրենիքը: Դա հայրենիքից իր անբաժանելության գիտակցումն է և նրա հետ երջանիկ և դժբախտ օրերը վերապրելը:

Ա. Տոլստոյ

Հայրենասիրությունը նաև հայրենիքի համար զոհված հերոսների հիշատակը անմար պահելն է:

Հովհաննես Իսակով

Եթե պիտի մեռնենք, ապա թող որ լինի սուրը մեր ձեռքին և կռվի դաշտում: Անարգ կյանքից ավելի՝ ազատ կյանքն է գովելի:

Մուրացան

1.2 ԻՆՉ Է ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայրենասիրությունը մարդու դրական հատկանիշերի համալիր ձևավորումն ու զարգացումն է: Նրա հիմքում ընկած են հոգևոր-բարոյական և սոցիալ-մշակութային բաղադրատարրեր: Հայրենասիրության գաղափարն առանձնահատուկ տեղ է գրավում ոչ միայն հասարակության հոգևոր կյանքում, մշակույթում, այլ նաև նրա գործունեության բոլոր կարևորագույն ոլորտներում՝ քաղաքականության, տնտեսության, գաղափարախոսության, բնապահպանության մեջ:

Հայրենասիրությունը հայրենիքի հետ անձի անբաժանելի լինելն է և միասնականության գիտակցումը: Էությամբ այն միասնական է, բայց միևնույն ժամանակ բազմաբնույթ է իր դրսևորումներում: Սակայն առայսօր դեռ չի ձևավորվել միասնական, բոլորի կողմից ընդունելի կարծիք, թե ինչ պետք է հասկանալ հայրենասիրություն ասելով:

Հայրենասիրության ըմբռնմանն ուղղված մոտեցումները կարելի է դասել ուղղությունների:

Առաջին ուղղությունը. տեսակետներն ու դատողությունները որպես հայրենիքի հանդեպ սիրո վեհ զգացում, այն բնորոշվում է հայրենի տան, ծննդավայրի հանդեպ սիրո վերացական դրսևորմամբ:

Երկրորդ ուղղությունը. հայրենասիրության նկատմամբ հուզական կողմի հետ մեկտեղ ներառվում է նաև զգացմունքի ուժը, մղելով ակտիվ գործողությունների հանուն սեփական հայրենիքի բարօրության:

Երրորդ ուղղությունը դիտարկում է հայրենասիրությունը որպես հասարակական երևույթ, որի բովանդակությունն ու բնույթը պայմանավորված են հասարակության, պետության պատմական զարգացման առանձնահատկություններով:

Չորրորդ ուղղությունը հայրենասիրության օբյեկտ է դիտվում պետությունը, անվանելով պետական հայրենասիրություն:

Հինգերորդ ուղղությունը բացահայտում է հարենասիրությունը անձի հետ անբաժանելի կապի հետ միասին և կոչվում է անձնային հայրենասիրություն:

Վեցերորդ ուղղությունը հայրենասիրությունը ըմբռնվում է որպես անձի հոգևոր ցարգացման ինքնարտահայտման փուլ, որը ենթադրում է կրոնական բովանդակություն և անվանվում է հոգևոր կրոնական հայրենասիրություն: Այն դրսևորվում է ակտիվ սոցիալական գործունեությամբ մարդու կողմից՝ ի բարօրություն հայրենիքի:

Հայրենասիրական զգացմունքի ըմբռնումը անբաժանելիորեն կապված է նրա գործունեության հետ, ինչն առավել կոնկրետ պլանով դրսևորվում է ակտիվ սոցիալական գործունեությամբ, գործողություններով և արարքներով, որ կատարվում են մարդու կողմից՝ ի բարօրություն հայրենիքի:

Հայրենասիրությունը սոցիալական երևույթ է, հասարակության գոյության և զարգացման հզոր աղբյուր:

Հայրենասիրության բնորոշ դրսևորումներից մեկը հզոր պետականության երազանքն է: Այն արտացոլում է մեր հասարակության պատմական զարգացման յուրահատկությունը: Այդպիսի հայրենասիրության կարևոր գործոն է պետությունը: Ներկայումս հայ հասարակության զարգացման, ժամանակակից պետության ստեղծման համար կարևորագույն պայման է համարվում հայրերասիրության վերածնունդը:

Իսկական հայրենասիրությունը նրա հոգևոր բնույթի մեջ է: Հայրենասիրությունը կարևորագույն գործոն է անձի առավել լիարժեք դրսևորման համար: Այն ենթադրում է հայրենիքին անշահախնդիր, անմնացորդ ծառայություն:

Այսպիսով, հայրենասիրությունը անձի, անհատի կարևորագույն հոգևոր ձեռքբերումն է, որը բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և արտահայտվում է ինքնադրսևորման ակտիվ գործունեությամբ՝ ի բարօրություն հայրենիքի:

Գլուխ 2

2.1. Հայրենաճանաչողության ուսուցման դաստիարակչական նշանակությունը

Նախադպրոցական տարիքում զարգանում է երեխայի անհատականությունը: Այս տարիքը կարևոր է հայրենասիրական զգացմունքների ձևավորման, դաստիականման համար:

Հայրենասիրության զգացումը պետք է լինի գիտակցված և ուժեղ: Պետք է հետաքրքրություն առաջացնել երեխայի մոտ հայրենի հողի, հայրենի մշակույթի և ավանդույթների նկատմամբ:

Մանկավարժի առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր հայրենիքի նկատմամբ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումը ստեղծելն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք նախնիներից:

Հայրենասիրությանը նվիրված պարապմունքները պետք է լինեն ազատ, անկաշկանդ և չդիտվեն միայն որպես գիտելիքի փոխանցման միջոց:

Այս հետազոտության թեմայի կարևորությունն այն է, որ հայրենիքին, հայրենիքի պաշտպան հերոսներին, զինվորներին ու բանակին նվիրված ազգային, ժողովրդական ռազմի ու զինվորի երգերը, իրենց ազդեցությունն են թողնում մատաղ սերնդի դաստիարակության գործընթացի վրա, նրանց տալիս բարոյական բարձր արժեհամակարգ:

2.2 ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԸ

Պետական դրոշը որոշակի գույների ու չափի պաստառ է՝ ամրացված սրածայր ձողի վրա:

Արյունից ծորած երիզ մի կարմիր,
Երկնքից պոկված կտոր մի կապույտ,
Հասուն հասկերի շող նարնջագույն
Եվ դարերի հավատի դրոշ Եռագույն:

Հայաստանի Հանրապետության դրոշը Հայաստանի առաջին հանրապետության (1918–20 թթ.) եռագույն դրոշն է՝ կարմիր, կապույտ, նարնջագույն հորիզոնական հավասար շերտերով՝ լայնության և երկարության 1:2 հարաբերությամբ:

Կարմիրը խորհրդանշում է հայ ժողովրդի մշտական պայքարը՝ հարատևման, Հայկական բարձրավանդակի, քրիստոնեական հավատի, Հայաստանի անկախության և ազատության համար, կապույտը՝ ապրելու կամքը խաղաղ երկնքի ներքո, նարնջագույնը՝ հայ ժողովրդի արարչական տաղանդն ու աշխատասիրությունը:

Պետական դրոշը ծածանվում է հանրապետության նախագահի նստավայրի, Ազգային ժողովի, Կառավարության, Սահմանադրական դատարանի, պետական տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, դատարանների, դատախազությունների, Մարդու իրավունքների պաշտպանի, Կենտրոնական բանկի, դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսությունների շենքերի և փոխադրամիջոցների վրա, ինչպես նաև օրենքով սահմանված այլ տեղերում:

Պետական զինանշան

Պետական զինանշանը խորհրդանշում է երկրի հասարակական-քաղաքական կարգը:

Հայաստանի Հանրապետության զինանշանը Հայաստանի առաջին հանրապետության զինանշանն է:

Զինանշանի կենտրոնում՝ վահանի վրա, պատկերված են Արարատ լեռը՝ Նոյյան տապանով, և պատմական Հայաստանի 4 թագավորությունների՝ Բագրատունիների (վերևից՝ ձախ), Արշակունիների (վերևից՝ աջ), Արտաշիսյանների (ներքևից՝ ձախ), Ռուբինյանների (ներքևից՝ աջ) զինանշանները: Վահանը պահում են արծիվը (ձախից) և առյուծը (աջից), իսկ վահանից ներքև պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա ու ժապավեն:

Պետական օրհներգ

Պետական օրհներգը հանդիսավոր երաժշտական ստեղծագործություն է՝ գրված ծրագրային բնույթի բանաստեղծության խոսքերով:

Հայաստանի Հանրապետության օրհներգը Հայաստանի առաջին հանրապետության օրհներգն է՝ «Մեր հայրենիքը» (խոսքը՝ որոշ փոփոխություններով, Միքայել Նալբանդյանի, երաժշտությունը՝ Բարսեղ Կանաչյանի):

Պետական օրհներգը պարտադիր հնչում է պաշտոնական հանդիսությունների ժամանակ: Երբ հնչում է պետական օրհներգը, ներկաները ոտքի են կանգնում և դեմքով շրջվում դեպի պետական դրոշը, տղամարդիկ հանում են գլխարկները:

Պարապմունք

Թեմա՝ << Իմ հայրենիքը Հայաստանն է >>

Խնդիրները

- Երեխաներին ծանոթացնել Հայաստանի քարտեզին, ՀՀ զինանշանին, պետական դրոշին: Ճշտել և ամրապնդել երեխաների ունեցած գիտելիքները մեր երկրի՝ Հայաստանի Հանրապետության, հայրենի վայրերի, հայոց բանակի մասին: Դաստիարակել սիրո և հպարտության զգացում:
- Զարգացնել երեխաների խոսքը: Պարապմունքների ժամանակ ստացած գիտելիքների հիման վրա երեխաներին սովորեցնել հյուսել կապակցված փոքրիկ պատմություններ՝ առաջարկվող

թեմայի շուրջ, ամրապնդել հարցերին պատասխանելու նրանց ունակությունը, մասնակցել զրույցին:

- Ամրապնդել հարցերին պատասխանելու նրանց ունակությունը, մասնակցել զրույցին, նպաստել արտահայտիչ խոսք կառուցելու կարողությունների ձևավորմանը:
- Հարստացնել բառապաշարը, սովորեցնել խոսքի մեջ գործածել ածականներ և դրանք համակցել գոյականների հետ:

Անհրաժեշտ պարագաներ.

- ✓ ՀՀ քարտեզը,
- ✓ Եռագույն դրոշը
- ✓ Զինանշանը,
- ✓ Օրհներգը,
- ✓ նկարներ Հայաստանի քաղաքների և գյուղերի մասին:

Զրույց պարզաբանում Հայաստանի Հանրապետության մասին: Ինչ է նշանակում <<Հայաստան>> բառը մեզ համար: Ներկայացնել Հայաստան աշխարհը իր ողջ գեղեցկությամբ և հմայքով: Ցուցադրել և պարզաբանել քարտեզը իր շրջաններով և քաղաքներով: Ովքեր են պաշտպանում մեև երկիրը և ինչպես է կոչվում այդ մասնագիտությունը: Հայոց բանակի զինվորները իրենց ուժով և տոկունությամբ, քաջությամբ և հպարտությամբ հսկում և պաշտպանում են մեև անդորրը, Փառք և պատիվ մեր զինվորներին:

Աջ ձեռքը սիտին, հպարտութան զգացումով կատարել ՀՀ օրհներգը <<Մեր Հայրենիքը>>:

Զրույց ՀՀ խորհրդանիշները մասին:

Հայաստանի Հանրապետության եռագույն դրոշը ցուցադրված է խմբասենյակում: Դրոշի գույներն ունեն իրենց մեկնաբանությունը. Կարմիր գույնը խորհրդանշում է հայ ժողովրդի մշտական պայքարը անկախ և ազատ ապրելու համար, կապույտ գույնը ապրելու կամքն է խաղաղ երկնքի ներքո: Կապույտը լիճն է Սևանա: Նարնջագույնը ցորենի արտերի գույնն է՝ հայ ժողովրդի քրտնաջան աշատանքի:

Տալ բացատրություն ՀՀ զինանշանի մասին: Զինանշանի կենտրոնում պատկերված են Արարատ լեռը՝ Նոյան տապանով: Վահանի վրա Հայաստանի չորս թագավորությունների զինանշաններն են՝ Բագրատունիների, Արշակունիների, Արտաշիսյանների, Ռուբինյանների: Վահանը պահում են արծիվը և առյուծը, իսկ ներքևում պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա և ժապավեն:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՂԻ ԿՈՂՈՄՈՎ
ՇԱՄԱ
ԳՈՒՆԴԱԿԱՆ
ԵՍԳՂԵՍՈ

Ֆիզկուլտ դադար <<Կարմիր, կապույտ, ծիրանագույն>> երաժշտության հնչյունների ներքո կատարում են շարժումներ՝ ռիթմիկ պարային:

Դիտարկում

Պարապմունքի պլանավորումը համապատասխանում է տարիքային խմբի ծրագրին: Պարապմունքը հագեցած էր անհրաժեշտ պարագաների բազմազանությամբ: Զրույցի ընթացքում ցուցադրվում, պարզաբանվում էին

նախատեսված խնդիրները, կիրառվում մեթոդներ, հնարներ, ձայագրություններ: Պարապմունքը հետաքրքիր էր բովանդակալից: Դաստիարակի խոսքը հստակ էր, հաճելի: Երեխաների պատասխանները գրական էին, արտահայտիչ:

Պարապմունքը տարվել է ԽԻԿ համակարգով, պահպանվել է նախատեսված տևողությամբ, սիրո և հպարտության ջերմ մթնոլորտում:

Դաստիարակը կարողացավ հասնել պարապմունքի նպատակին՝ ըստ որի անհրաժեշտ է երեխաներին տալ գիտելիքներ հայրենիքի, հայկական բանակի մասին: Դաստիարակել հպարտության զգացում: Զարգացնել ստեղծագործական միտքը, խոսքը, հարստացնել բառապաշարը: Պարապմունքի ավարտին երեխաները կարողացան ստացած գիտելիքների շնորհիվ հյուսել կապակցված խոսք՝ փոքրիկ պատմություններ ներկայացնելով:

Երեխաները ոգևորված էին, շատ ակտիվ, հայրենասիրական ոգով և տրամադրությամբ լցված:

Այս խանդավառությամբ և հայրենասիրությամբ ներշնչված երեխաները հաջորդ օրը ներկայացրեցին գեղեցիկ միջոցառում նվիրված հայոց բանակի զինվորներին: Զինվորական համազգեստով, դրոշակներով և պաստառներով: Զինվորական հյուրերի հետ միասին ունեցան մի հրաշալի, հիշարժան օր: Զինվորականները հրավիրեցին մոտակ զորամաս բանակի առօրյային ծանոթանալու համար:

ՍԵՐ
ՀԵՐՈՍՆԵՐ

Եզրակացություն

Պարապմունքի և կատարած միջոցառումների միջոցով գիտելիքներ փոխանցվեց երեխաների հայրենաճանաչողության կարևորության և անհրաժեշտության վերաբերյալ:

Պարապմունքը նպաստեց երեխայի, անձի ճանաչողական գիտելիքների ձևավորմանը, որն էլ միտված կլինի իր գործունեությամբ նպաստել հայ հասարակության զարգացմանն ու վերափոխմանը:

Պարապմունքների, միջոցառումների ժամանակ հիշատակվում է մեր անմահ հերոսների անունները, ցուցադրվում նկարներ, խոսվում նրանց կատարած սխրագործությունների մասին: Ստեղծվում է ազգային մտածելակերպ, որը կազմում է կեցության հիմքը և բնականոն գոյության և զարգացման երաշխիքը:

Սիրիր քո հայրենիքը ոչ թե խոսքով, այլ գործով, եղիր քո հարենիքի զավակը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Արապովա-Պիսկարևա Ն. «Իմ տունը». Նախադպրոցական տարիքի երեխաների բարոյահայրենասիրական դաստիարակության ծրագիրը.
2. Բազարովա Օ. Վ. «Նախադպրոցականների բարոյական և հայրենասիրական դաստիարակություն»
3. Դմիտրիևա Ե. Ա. «Հայրենասիրական դաստիարակություն նախադպրոցական ուսումնական հաստատությունում»
4. Զատսեպինա Մ. Վ. «Ռազմական փառքի օրեր. Նախադպրոցականների հայրենասիրական դաստիարակություն»
5. Չիբուխչյան, Լ. Սարգսյան՝ Մայրենի լեզվի պարապմունք, մանկապարտեզի ավագ խումբ՝ ուսումնամեթոդական ձեռնարկ: